

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆԻ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ/ՏԵՂԱԿԱՆ/ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ
ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՄ-16/2-1**

ք. Իջևան

<<16>> մարտի 2016 թ.

<<<< Տավուշի մարզպետարանը>> , ի դեմս աշխատակազմի ղեկավար Ս. Դավթյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լևոն երկրորդ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ֆ. Անտոնյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱԼ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և կատարման ժամկետ է սահմանվում մինչև՝ 31.12.2020թ.-ը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երեք օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի 2016 թվականին կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է **17 098 800 (Տասնյոթ միլիոն իննսունուրե հազար ութ հարյուր) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Պայմանագրով 2017 թվականի և հաջորդ տարիների համար նախատեսված աշխատանքները կկատարվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր (այսուհետև՝ Համաձայնագիր), իսկ նշված Համաձայնագրով կսահմանվի կատարման ենթակա Աշխատանքների գինը:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրի կնքման տարվա դեկտեմբերի 20-ը:

4.2.1 Դեկտեմբերի 20-ից հետո կատարված աշխատանքների համար վճարումները կիրականացվեն նշված աշխատանքներն իրականացնելու համար հաջորդող տարվա հատկացված միջոցների հաշվին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով¹:

¹ Պայմանագրի օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԵՎԱԿԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետը՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսելը, սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Նույն կետի համաձայն՝ կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:

7.2 Սույն պայմանագիրը համարվում է կնքված Կողմերի ստորագրման պահից և ուժի մեջ է մտնում գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող վճարման կարգը սահմանող համաձայնագրի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը կլուծարվի, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար

անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.6 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:


7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԿՆԱԾՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Տավուշի մարզպետարան
ՀՀ Տավուշի մարզ ք. Բջևան
Սահմանադրության 1
Հ/Հ 900371079022
ՀՎՀՀ 07611324



ԿԱՏԱՐՈՂ

«Ընդ երկրորդ» ՍՊԸ
ՀՀ ք. Նոյեմբերյան
Նոյեմբերի 29/21
Հ/Հ 220153330034-000
ՀՎՀՀ 07403208



Ֆ. Անտոնյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ընթացիկ ամառային և
ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների

I. Տեխնիկական պահանջներ

1. Ապահովել ՀՀ Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների և արհեստական կառույցների պահպանվածությունը այնպիսի վիճակում, որը համապատասխանում է տարվա ցանկացած ժամանակ անվտանգ երթևեկության ապահովման պահանջներին:

2. Ապահովել սպասարկվող ճանապարհահատվածներին տրանսպորտի շուրջօրյա և անվտանգ երթևեկությունը համաձայն ճանապարհների պահպանման կանոնների:

3. Ընթացիկ ձմեռային (ձմեռվա ժամանակահատված) պահպանման պահանջներն են՝

- Ճանապարհների կոնստրուկտիվ տարրերի և երթևեկամասերում թույլ չտալ աղբի, ձյան և սառույցի առկայություն

- Ձյան առատ տեղումների ընթացքում թույլ չտալ 5 սմ-ից ավել շերտի գոյացում: Ուժեղ ձնաբքերի դադարելուց անմիջապես հետո սկսել և ոչ ավելի քան 4 ժամվա ընթացքում ավարտել ճանապարհների մաքրումը

- Մերկասառույցի դեմ պայքարի համար ժամանակին կիրառել աղի և ավազի ցանումը

- Աշխատանքների կատարման ընթացքում ապահովել երթևեկության անվտանգությունը

- Առատ ձյան տեղումների և ուժեղ ձնաբքերի ժամանակ, ճանապարհների մաքրման տեխնիկապես անհնարինության կամ աննպատակահարմարության դեպքում, ճանապարհների փակումն ու բացումը կատարել Պատվիրատուի և ավտոտեսչության տեղական մարմինների համաձայնությամբ

- Ստեղծել շուրջօրյա հերթապահություն, վարել տվյալների գրանցման մատյան և ամեն օր, ժամը 6-8-ը, 12-14-ը և 18-20-ը Պատվիրատուի հերթապահությանը տվյալներ հայտնել, տեղում եղանակի ու ճանապարհների վիճակի մասին:

- Սպասարկվող ավտոճանապարհների տարածքում ունենալ առնվազն մեկ ստացիոնար հենակետ՝ ապահոված հոսանքով, կապի միջոցներով բանվորների և մեխանիզատորների համար քեռուցվող հանգստյան սենյակով:

- Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման կարգի» մեթոդական ցուցումների 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:

4. Ընթացիկ ամառային («ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ») ժամանակահատված) պահպանման և շահագործման պահանջներն են՝

- Ճանապարհների շահագործման և պահպանման կանոնների համաձայն ապահովել սպասարկվող ավտոճանապարհների հետևյալ կոնստրուկտիվ տարրերի պահպանվածությունը՝

- Հողային պաստառ և օտարման շերտ
- Երթևեկելի մաս

- Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների կարգի» մեթոդական ցուցումների 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ամառային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:

5. ՀՀ Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների վիճակը և սպասարկման մակարդակները 2016թ. համար՝ համաձայն N 1.1 հավելվածի:

II. Ձեռքբերման պայմաններ

1. ՀՀ Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման ժամկետը սահմանվում է 5 տարի՝ **01.01.2016թ.-31.12.2020թ.:**

III. Աշխատանքների ինքնաթեքի հաշվարկի և գնային առաջարկի ձևեր

1. ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման» կարգի IV գլխի 33-րդ կետի համաձայն.

ա) ձև 8-ում (համաձայն՝ N 1.2 հավելվածի) բերված յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար մասնակցի կողմից լրացվում են սպասարկման ենթակա ճանապարհահատվածների ամբողջ ցանցի «ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ» և «ՁՄԵՌ» ժամանակաշրջանների պահպանման աշխատանքների համար կատարվող ծախսերը և հաշվարկվում են սպասարկվող ճանապարհահատվածների պահպանության արժեքները, որն օգտագործվում է միայն ընթացակարգում առաջին տեղ զբաղեցրած մասնակցին որոշելու նպատակով.

բ) ձև 8-ի բոլոր հանրագումարները լրացվում են Ձև 6-ի Աղյուսակ 5-ի համապատասխան սյունակներում՝ ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի արժեքի (համաձայն՝ N 1.2 հավելվածի).

գ) ընթացիկ («ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ» պահպանման ժամանակաշրջան) պահպանման և շահագործման աշխատանքների 1 կմ-ի արժեքները լրացվում են Ձև 6-ի աղյուսակներ 6-ում և 7-ում՝ ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի արժեքի (համաձայն՝ N 1.2 հավելվածի)՝

- Աղյուսակներում լրացվող 1 կմ ավտոճանապարհի պահպանման արժեքում նշագծման աշխատանքների գինը չի հաշվարկվում.

- Աղյուսակների բոլոր ազատ վանդակները պետք է պարտադիր լրացվեն մասնակցի կողմից՝ անկախ տվյալ տարածաշրջանում ընդգրկված ճանապարհների նշանակությունից, վիճակից և սպասարկման մակարդակից.

դ) արժեքները պետք է ընդգրկեն ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր հարկատեսակներն ու տուրքերը, այդ թվում՝ ԱԱՀ:

IV. Աշխատանքների սահմանային արժեքներ և գնային առաջարկի գնահատում

1. Գնային առաջարկի գնահատումը կատարվում է ընթացակարգի մասնակիցների կողմից լրացված և ներկայացված՝

- Ձև 6-ի արժեքների համեմատությամբ պահպանման և շահագործման աշխատանքների սահմանային արժեքների հետ,

- Ձև 7-ի հանրագումարների համեմատությամբ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ


ՀՀ Տավուշի մարզպետարան
ՀՀ Տավուշի մարզ ք. Բջևան
Սահմանադրության 1
Հ/Հ 900371079022
ՀՎՀՀ 07611324

U. Tavitjan
/ստորագրություն/
Ս. Դավթյան



ԿԱՏԱՐՈՂ

<<Լևոն Երկրորդ>> ՍՊԸ
ՀՀ ք. Նոյեմբերյան
Նոյեմբերի 29/21
Հ/Հ 220155330634-000
ՀՎՀՀ 07403208



Հավելված N 1.1
 գնան պայմանագրի

<<16>> <<մարտի>> 2016 թ. կնքված N ԳԱԿ-ՇՀԱՀԲ-15/1-ՏՄ-16/2-1


ՀՀ Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների վիճակը, սպասարկման մակարդակները և սահմանային արժեքները

1	2	3	4	5	6	7	8
Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Ավտոճանապարհի Տեխնիկական կարգը	Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/	Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը	Սպասարկման պահանջվող մակարդակ	Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/	Միավորի գինը /հազար դրամ/ ներառյալ շահույթը և ԱԱՀ 20%	Ընդամենը տարվա կտրվածքով /հազար դրամ/ ներառյալ շահույթը և ԱԱՀ 20%
Պահպանման ժամանակաշրջանը՝ ՉՄԵՈ							
S-10-24 /Մ-4/-Գետահովիտ կմ0+000-կմ2+100	Տեղական II-IV	2.1	SՎ/III/	բավարար	2.1	220. 500	463. 050
S-10-25 /Մ-4/-Լուռաձոր կմ0+000-կմ1+500	Տեղական II-IV	1.5	ՏԼ/II/	բավարար	1.5	220. 500	330. 750
S-10-26 /Մ-4/-Լուսահովիտ կմ0+000-կմ5+800	Տեղական II-IV	5.8	ՏԼ/II/	բավարար	5.8	220. 500	1 278. 900
S-10-27 /Մ-4/-Ակնաղբյուր կմ0+000-կմ3+000	Տեղական II-IV	3.0	SՎ/III/	բավարար	3.0	220. 500	661. 500
S-10-28 Մ-16 - Սևքար կմ0+000-կմ2+000	Տեղական II-IV	2.0	ՏԼ/II/	բավարար	2.0	220. 500	441. 000
S-10-29 /Մ-16/-Ն.Ծաղկավան կմ0+000-կմ1+500	Տեղական II-IV	1.5	ՏԲ/II/	բավարար	1.5	220. 500	330. 750
S-10-31 /Մ-4/-Հովք կմ0+000-կմ3+200	Տեղական II-IV	3.2	ՏԲ/II/	բավարար	3.2	220. 500	705. 600
S-10-32 /Մ-4/-Դիտավան կմ0+000-կմ2+000	Տեղական II-IV	2.0	SՎ/III/	բավարար	2.0	220. 500	441. 000
S-10-30 Մ16 - Կիրանց-Աճարկուտ կմ0+000-կմ3+200	Տեղական II-IV	3.2	SՎ/III/	բավարար	3.2	220. 500	705. 600
S-10-22 Հ36 – Գանձաքար կմ0+000-կմ2+100	Տեղական II-IV	2.1	ՏԼ/II/	բավարար	2.1	220. 500	463. 050
Ընդամենը		26.4	SՎ/III/	բավարար	26.4		5 821. 200


Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄՍԱՌ-ԱՇՈՒՆ									
S-10-26 /Մ-4/-Լուսահովիտ կմ0+000-կմ5+500	Տերական II-IV	5.5	SL //	միջին	5.5	693.000	3 811. 500		
S-10-28 Մ-16 - Սևբայր կմ0+000-կմ2+000	Տերական II-IV	1.5	SL //	միջին	1.5	693.000	1 039. 500		
S-10-25 /Մ-4/-Լուսածոր կմ0+000-կմ1+500	Տերական II-IV	1.5	SL //	միջին	1.5	693.000	1 039. 500		
S-10-29 /Մ-16/-Ն.Ճաղկավան կմ0+000-կմ1+500	Տերական II-IV	1.5	ՏԲ// / /	միջին	1.5	817. 680	1 226. 520		
S-10-31 /Մ-4/-Հովք կմ0+000-կմ3+200	Տերական II-IV	3.2	ՏԲ// / /	բավարար	3.2	845. 400	2 705. 280		
S-10-22 Հ36 – Գանձաքար կմ0+000-կմ2+100	Տերական II-IV	2.1	SL //	միջին	2.1	693.000	1 455. 300		
Ընդամենը		15.3			15.3		11 277. 600		
Ընդամենը՝ Իջևանի տարածաշրջանով									
17 098. 800									

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Տավուշի մարզպետարան
 ՀՀ Տավուշի մարզ ք. Իջևան
 Գանձաքարի տարածաշրջան I
 ՀՀ 220153380034-000
 ՀՀ 220153380034-000
 ՀՀ 220153380034-000



Ս. Դավթյան
 /տարածաշրջանի/ Կ.Տ



ԿԱՏԱՐՈՂ
 <<Լեռն երկրորդ>> ՍՊԸ
 ՀՀ ք. Լոյկեակերտ
 Լոյկեակերտի 29/21
 ՀՀ 220153380034-000
 ՀՀ 220153380034-000

Ֆ. Աստուկյան
 /տարածաշրջանի/ Կ.Տ

<<16>> <<մարտի>> 2016 թ. կնքված N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՄ-16/2-1 գնման պայմանագրի Ձև N 6. Աղյուսակ 6.1

ՀՀ Տավուշի մարզի, Իջևանի տարածաշրջանի II-IV տեխնիկական կարգի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամբողջի (ԳԱՐՈՒՆ-ԱՄՍՈ-ԱՇՈՒՆ) պահպանման արժեքը (ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Շածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
Երաշխիքային ՏԵ	358 000		
Լավ ՏԼ (I)	623 700	577 500	
Բավարար ՏԲ (II)		681 400	704 500

ՀՀ Տավուշի մարզի, Իջևանի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման արժեքը (ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Շածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
II-IV տեխնիկական կարգի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհներ	358 000	203 300	183 750

Ձև N 6. Աղյուսակ 5

ՀՀ Տավուշի մարզի, Իջևանի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման արժեքը (ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Սպասարկվող ճանապարհահատվածի երկարությունը	Սպասարկման պահանջվող մակարդակը	Սպասարկվող ա/ճ հատվածների ընդհանուր երկարությունը	Ձմեռային պահպանման ընդհանուր արժեքը՝ տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)
S-10-24 /Մ-4/- Գետահովիտ կմ0+000-կմ2+100	2.1	բավարար	2.1	385 875
S-10-25 /Մ-4/- Լուսաձոր կմ0+000-	1.5	բավարար	1.5	275 625

կմ1+500				
S-10-26 /Մ-4/- Լուսահովիտ կմ0+000- կմ5+800	5.8	բավարար	5.8	1 065 750
S-10-27 /Մ-4/- Ակնադրյուր կմ0+000- կմ3+000	3.0	բավարար	3.0	551 250
S-10-28 Մ-16 - Սևքար կմ0+000-կմ2+000	2.0	բավարար	2.0	367 500
S-10-29 /Մ-16/- Ն.Ծաղկավան կմ0+000-կմ1+500	1.5	բավարար	1.5	275 625
S-10-31 /Մ-4/-Հովք կմ0+000-կմ3+200	3.2	բավարար	3.2	588 000
S-10-32 /Մ-4/- Դիտավան կմ0+000- կմ2+000	2.0	բավարար	2.0	367 500
S-10-30 Մ16 - Կիրանց-Աճարկուտ կմ0+000-կմ3+200	3.2	բավարար	3.2	588 000
S-10-22 Հ36 - Գանձարար կմ0+000- կմ2+100	2.1	բավարար	2.1	385 875
Ընդամենը	26.4		26.4	4 851 000

Ձև N7

Հաշվարկ

ՀՀ Տավուշի մարզի , Բջևանի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների սպասարկման ընթացիկ տարվա արժեքի (ՀՀ դրամ)

Տեխնիկական կարգը	Առկա վիճակը	Սպասարկման մակարդակը	Հատվածների ընդհանուր երկարությունը (կմ)	Միավոր գինը համապատասխան սպասարկման (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)	Ընդամենը արժեքը <<4>> x <<5>> (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)
1	2	3	4	5	6
Տեղական II-IV	Լավ SL(I)	միջին	5.5	577 500	3 176 250
Տեղական II-IV	Լավ SL(I)	միջին	1.5	577 500	866 250
Տեղական II-IV	Լավ SL(I)	միջին	1.5	577 500	866 250
Տեղական II-IV	SF(II)	միջին	1.5	681 400	1 022 100
Տեղական II-IV	SF(II)	բավարար	3.2	704 500	2 254 400
Տեղական II-IV	Լավ SL(I)	միջին	2.1	577 500	1 212 750
ա/ Ընդամենը ընթացիկ պահպանում				9 398 000	
բ/ Ընդամենը ձմեռային պահպանում համաձայն Ձև 6-ի				4 851 000	
ԱՄԲՈՂՋԸ (ա+բ)				14 249 000	

ԱՄԲՈՂՋԸ տատերով
Տասչորս միլիոն երկու հարյուր քառասունինը հազար

Հաշվարկ

ՀՀ Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների «ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ» և «ՁԱՄԵՌ» պահպանման ժամանակաշրջաններ) պահպանման աշխատանքների՝ սպասարկման ընթացիկ տարվա արժեքի (ՀՀ դրամ)

1.	Պահպանության վրա կատարվելիք ծախսեր, ընդամենը այդ թվում՝	Գարուն-Ամառ-Աշուն	Ձմեռ
1.1	-հումք և կյութեր	3 571 240	1 067 220
1.2	-վառելիք	845 820	970 200
1.3	-էլ. էներգիա	375 920	388 080
1.4	-մեխանիզ. և մեքեն-ի վարձավճար		
1.5	-աշխատանքի վարձատրման ծախսեր	2 631 440	1 358 280
1.6	-սոց. Հատկացումներ	939 800	485 100
1.7	-ամրոտիզացիոն հատկացումներ	469 900	242 550
1.8	-այլ ծախսեր	93 980	97 020
2.	Շահութաբերություն <u>5</u> %	469 900	242 550
	Ընդամենը	9 398 000	4 851 000
3.	ԱԱ հարկ 20%	1 879 600	970 200
	ԱՄԲՈՂՁԸ	11 277 600	5 821 200


ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Տավուշի մարզպետարան
 ՀՀ Տավուշի մարզ ք. Իջևան
 Սահմանադրության 1
 Հ/Հ 900371079022
 ՀՎՀՀ 07611324



ԿԱՏԱՐՈՂ

<<Լևոն երկրորդ>>ՍՊԸ
 ՀՀ ք. Նոյեմբերյան
 Նոյեմբերի 29/21
 Հ/Հ 220153330034-000
 ՀՎՀՀ 07403208



Ֆ. Անտոնյան
 /ստորագրություն/

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

<< դրամ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.' ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1.	«Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ			3854.000	5364.000	6874.000	8384.000	9894.000	11404.000	12914.000	14394.000	15787.600	17098.800	17098.800

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ


ՀՀ Տավուշի մարզպետարան
 ՀՀ Տավուշի մարզ ք. Իջևան
 Սահմանադրության 1
 Հ/Հ 900371079022
 ՀՎՀՀ 07611324



Ս. Դավթյան

ԿԱՏԱՐՈՂ

«Ըստն երկրորդ» ՍՊԸ
 ՀՀ ք. Նոյեմբերյան
 Նոյեմբերի 29/21
 Հ/Հ 220153330034-000
 ՀՎՀՀ 07403208



Յ. Անտոնյան

/ստորագրություն/
 Կ.Տ.

Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____
 Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
 Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով
 Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. կազմված՝ գնման հայտը
 նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև
 նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական
 բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
 Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

Կատարված աշխատանքների								
N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ չարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա ա գումարը /հազար դրամ/ _____	Վճարման ժամկետ ը /ըստ վճարման ն ժամանակացույցի/ _____
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ -----ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
-----ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ----- -ին կնքված N -----
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ----- -- -ին հանձնման-
ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն